MA-SIS

ՄԱ-ՍԻՍ

N° 10

GAZETTE DE LA COMMUNAUTÉ ARMÉNIENNE DE LILLE, FÉVRIER – AOÛT 2011

Լիլահայ համայնքի պարբերական, փետրվար – օգոստոս 2011

ASSEMBLÉE GÉNÉRALE DE L'ASSOCIATION *ARARAT* (le 10 décembre 2010)

Présents : Louisette Lamarche, Garik Galstyan, Haïk Gambarian, Anna Shirinyan, Tatévik Bazinian, Vahé Mughnetsyan, Nariné et Edouard Bazinian, Jacqueline Kasparian, Karen et Hranush Mkhitaryan
Excusés : Dikran et Tamar Hanonik

Le bilan d'activité de l'année 2010

Les différents temps forts de la vie de l'association sont relatés dans les numéros de notre gazette.
.En janvier 2010 nous avons organisé la messe de Noël arménien.
. Depuis octobre, chaque samedi, nous avons repris pour les enfants les cours d'arménien et de civilisation qui réunissent de 5 à 10 élèves de plus de 7 ans. À la rentrée d'octobre, Siranouche et Susanna ont cessé leurs cours pour cause de déménagement les éloignant de la métropole de Lille. Tamar a proposé de prendre en charge les cours de découverte de l'alphabet pour les plus petits dès 3/4 ans. Il nous reste à chercher un professeur pour la thématique de la civilisation.
. Louciné a organisé quelques cours de danse pour les enfants.
. Les permanences de l'association se sont également organisées dans le même lieu parallèlement.
. À compter de mars, chaque samedi, ont été mis en place des cours de français pour les adultes assurés à tour de rôle par Nariné, Tatévik et Garik. Ils réunissent de 5 à 15 adultes, surtout des dames de différents niveaux dans cette langue.
. Fin juin sont sortis les numéros 8 et 9 de la gazette de l'association *Ma-Sis*.
. Deux déplacements ont eu lieu :
 - En février 2010 : nouvelle rencontre avec Serge Avédikian et Cengiz Aktar à Bruxelles pour un débat organisé par les étudiants de Sciences Politiques de l'Université Libre de cette ville sur les rapports entre Arméniens et Turcs ;
 - En mars 2010 : sortie dans le cadre de la fête des femmes au marché aux tissus Saint Pierre à Paris, quartier de Montmartre, et pour visiter la maison de Joséphine de Beauharnais à Rueil-Malmaison.
. En juillet a été organisée la fête de fin d'année scolaire.
. Le 8 août Nelli, Haïk Louisette et Nariné ont participé à la fabrication de *lavache* dans le cadre de l'atelier sur le pain. Cette manifestation autour de trois semaines d'animations intitulée « La campagne à la ville » a été organisée par la ville de Mons en Barœul et financée en partie par le Conseil Régional.
. En août, Siranouche, Samvel, Louciné et leurs enfants ont représenté notre association dans une manifestation de musique et de danse mise en œuvre à Dunkerque par l'école de musique, et dans la Journée européenne des oubliés des vacances du Secours Populaire à Paris.
. Le 6 novembre nous avons présenté notre association au Forum des Associations de la ville de Mons en Barœul.

«ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹՅԱՆ 2010 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ (10-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ)

Ընդհանուր ժողովին ներկա էին՝ Լուիզեթ Լամարշը, Գարիկ Գալստյանը, Հայկ Ղամբարյանը, Աննա Հակոբյանը, Տաթևիկ Բազինյանը, Վահե Մուղնեցյանը, Նարինե և Էդուարդ Բազինյանները, Ժակլին Կասպարյանը, Կարեն և Հրանուշ Մխիթարյանները
Հարգելի պատճառներով բացակա էին՝ Դիկրան և Թամար Հանոնիկները

Միության գործունեությունը 2010 թ.

Միության կյանքի կարևոր իրադարձությունները ներկայացվել են մեր պարբերականի համարներում:
. 2010 թ. հունվարին կազմակերպվել է Սուրբծննդյան պատարագը:
. Հոկտեմբեր ամսից փոքրերի համար վերսկսվել են հայոց լեզվի և գրականության շաբաթօրյա դասերը, որոնց հաճախում են 7 տարեկանից բարձր 5-10 աշակերտ: Ուսումնական տարվա սկզբից բնակության վայրը փոխելու և Լիլից հեռանալու պատճառով Սիրանուշն ու Սուսաննան այլևս չէին կարող շարունակել դասավանդել: Թամարն առաջարկել է ամենափոքրիկների՝ 3-4 տարեկան երեխաների համար, վարել այբուբենին ծանոթանալու դասեր: Մեզ մնում է փնտրել հայոց քաղաքակրթության դասաժամերի դասատու:
. Լուսինեն մի քանի պարի դասեր է տվել երեխաներին:
. Նույն վայրում և դասերին զուգահեռ մշտապես կազմակերպվում են միության շաբաթօրյա հանդիպումները:
. Մարտ ամսից սկսած մեծերի համար ամեն շաբաթ օր անցկացվում են ֆրանսերենի դասեր, որոնք վարում են Նարինեն, Տաթևիկը և Գարիկը: Ֆրանսերենի տարբեր իմացությամբ 5-15 մեծահասակ, հատկապես կանայք, մասնակցում են այս դասընթացներին:
. Հունիսի վերջին լույս են տեսել միության «Մա-Սիս» պարբերականի 8-րդ և 9-րդ համարները:
. Լիլից դուրս կազմակերպվել է երկու միջոցառում՝
 - 2010 թ. փետրվարին՝ նոր հանդիպում Բրյուսելում Սերժ Ավետիքյանի և Չենգիզ Աքտարի հետ այդ քաղաքի Ազատ համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի ուսանողների կազմակերպած բանավեճի շրջանակներում՝ նվիրված հայ-թուրքական հարաբերություններին:
 - 2010 թ. մարտին՝ Կանանց տոնի առթիվ, էքսկուրսիա է կազմակերպվել դեպի Փարիզ՝ Մոնմարտր թաղամասում գտնվող «Սենտ Պիեռ» կտորեղենի շուկա, ինչպես նաև այցելություն Ռյուեյ-Մալմեզոնում գտնվող Ժոզեֆին դը Բոհարնեի տուն:
. Հուլիս ամսում կազմակերպվեց միջոցառում՝ կապված ուսումնական տարվա ավարտի հետ:
. Օգոստոսի 8-ին Նելլին, Հայկը, Լուիզեթը և Նարինեն մասնակցեցին հայկական լավաշի պատրաստման ցուցադրմանը՝ Մոնս ան Բարոլի քաղաքապետարանի կազմակերպած «Գյուղը տեղափոխել քաղաք» խորագրով միջոցառումներից մեկի՝ «Հացի խմբակի», շրջանակներում, որի հովանավորն էր Մարզային Խորհուրդը:
. Օգոստոս ամսին Սիրանուշը, Սամվելը, Լուսինեն և նրանց

. Le 27 novembre, à la Fnac, nous avons participé à la conférence sur le « Dialogue sur le tabou arménien » organisé dans le cadre des « 14ièmes semaines européennes de la philosophie » de l'association *Citéphilo*.

Bilan financier de l'année

Au 23 novembre 2010, l'association a récolté 2 117,95 € (la moitié moins que l'année dernière) et en a dépensé 2 431,10 €. Cette baisse d'activité financière s'explique essentiellement par l'absence d'organisation de spectacle en septembre, comme les autres années et moins de sorties en bus. Le produit des adhésions s'est élevé à 240 € (les adhésions commencent en octobre de l'année précédente et peuvent donc s'étaler sur deux années budgétaires). Les produits de la vente de la gazette et de l'école se sont élevés respectivement à 139 et 90 €. Le coût de l'inscription trimestrielle n'est pas forcément réclamé chaque trimestre, certaines familles ont très peu de moyens. La vente de la gazette se réalise quasiment à prix coûtant. Les dépenses de l'école ont été un peu plus élevées que les recettes si l'on prend en compte l'achat d'un tableau et l'organisation de la fête de fin d'année. Une subvention de 200 € à été perçue de la part de la ville de Mons en Barœul pour l'année 2010. La sortie de la Fête des femmes et l'« atelier du pain » ont été financés par la commune, la région et les participants. Monsieur Babayan continue à nous verser régulièrement une somme de 15 € par mois à titre de don.

En plus du tableau pour l'école, l'association s'est dotée d'un projecteur dont nous avions besoin lors de l'organisation de manifestations.

Un compte sur livret a été ouvert pour 250 €. En tenant compte de cette somme, le solde bancaire disponible au 23 novembre 2010, compte tenu des activités des années antérieures, s'élève à 1 455,81 €.

L'ensemble de la comptabilité est consultable par les membres de l'association.

Les membres agréent à l'unanimité ces bilans d'activité et financier.

Administration et décisions pour 2011

40 familles ont adhéré à l'association pour l'année 2010.

Le conseil d'administration (CA) ne s'est pas plus réuni en 2010 qu'en 2009, les permanences du samedi parallèlement aux cours d'arménien servant de lieu de concertation, de montage de projets et de décisions. Le CA est composé de 12 membres. Compte tenu des départs et non renouvellement d'adhésion de certains membres, il est convenu à l'unanimité de reconduire tous les membres du CA ayant adhéré et d'accueillir Nariné Bazinian et Karen Mkhitaryan. Il est décidé, également à l'unanimité, de reconduire Louisette Lamarche, Haïk Gambarian et Garik Galstyan en temps que respectivement, Présidente, vice Président et trésorier de l'association et de nommer Karen Mkhitaryan secrétaire de l'association.

L'assemblée générale a décidé, également à l'unanimité de ses membres présents, de maintenir invariable la cotisation à l'association (à 15 € par an et par famille) et le prix pour la gazette. Le prix mensuel à 5 € pour les cours d'arménien ne concerne que le premier enfant de la famille, les autres obtenant la gratuité.

երեխաները մեր միությունը ներկայացրել են Դյունկերք քաղաքի երաժշտական դպրոցի՝ երաժշտության ու պարի միջոցառման և Փարիզի «Ժողովրդական օգնության» կազմակերպած «Արձակուրդ չգնացած երեխաների եվրոպական օրվա» շրջանակներում:

. Նոյեմբերի 6-ին ներկայացրել ենք մեր միությունը Մոնս ան Բարոլի «Միությունների Փորումում»:

. Նոյեմբերի 27-ին մասնակցել ենք «Ֆնակ»ում կազմակերպված «Երկխոսություն հայկական թաբուի թեմայով» բանախոսություններին՝ փիլիսոփայության «Սիթեֆիլո» 14-րդ եռշաբաթյա եվրոպական հանդիպումների շրջանակներում:

Տարվա ֆինանսական հաշվետվությունը

2010 թ. նոյեմբերի 23-ի դրությամբ միությունը մուտքագրել է 2 117,95 € (նախորդ տարվա համեմատ երկու անգամ քիչ) և ծախսել՝ 2 431,10 €: Ֆինանսական ակտիվության այս անկումը գլխավորապես բացատրվում է սեպտեմբեր ամսին ավանդական կազմակերպվող միջոցառման բացակայությամբ և ավտոբուսով կատարվող ճանապարհորդությունների թվի նվա-զումով: Հավաքած անդամավճարների գումարը կազմել է 240 € (անդամագրվելը սկսվում է նախորդ տարվա հոկտեմբեր ամսից և կարող է նաև երկարաձգվել): Պարբերականի վաճառքից և դպրոցի համար վճարումներից ստացված գումարները համապատասխանաբար կազմել են 139 € և 90 €: Եռամսյա վճարումները միշտ չէ, որ պահանջվել են ամեն երրորդ ամսվա ընթացքում, քանի որ որոշ ընտանիքներ չունեն բավարար միջոցներ: Պարբերականի վաճառքի գինը համարյա թե մոտ է ինքնարժեքին: Դպրոցի համար նախատեսված ծախսերը եկամուտներից ավելին են՝ հաշվի առնելով այն, որ այս տարի գնվել է գրատախտակ և կազմակերպվել ուսումնական տարեվերջյան տոնը: 2010 թ. համար 200 € դրամական օգնություն է ստացվել Մոնս ան Բարոլ քաղաքի կողմից: Կանանց տոնի առթիվ էքսկուրսիան և «Հացի խմբակը» ֆինանսավորվել են քաղաքապետարանը, մարզպետարանը և մասնակիցները: Պարոն Բաբայանը շարունակում է ամեն ամիս պարբերաբար մեզ փոխանցել 15 €՝ որպես նվիրատվություն:

Գրատախտակից բացի միությունը գնել է նաև տեսալուսարձակ, որի կարիքը զգացվում էր միջոցառումների կազմակերպման ժամանակ:

250 €-ի համար բացվել է խնայողական գրքույկ: Հաշվի առնելով նախորդ տարիների գործունեությունը՝ 2010 թ. նոյեմբերի 23-ի դրությամբ բանկային հաշվի մնացորդը կազմել է 1455,81 €:

Ֆինանսական հաշվետվության մանրամասները գտնըվում են միության անդամների տրամադրության տակ:

Միության անդամները միաձայն հաստատեցին գործունեության ֆինանսական հաշվետվությունը:

Կազմակերպական հարցեր և որոշումներ 2011 թ. համար

2010 թ. «Արարատ» միությանն անդամագրվել է 40 ընտանիք:

Ինչպես 2009 թ., 2010 թ. ևս Վարչական խորհուրդը (ՎԽ) ոչ մի անգամ չի հավաքվել, քանի որ շաբաթօրյա դպրոցում մեր մշտական հանդիպումները ծառայեցրել ենք նաև ծրագրերի համաձայնեցման, կազմման և որոշումների ընդունման աշխատանքներին: ՎԽ կազմված է 12 անդամներից: Ի նկատի ունենալով որոշ անդամների նոր բնակավայր տեղափոխվելու և անդամավճարների չմուծելու հանգամանքը, միաձայն որոշվեց երկարացնել բոլոր անդամավճարները մուծած ՎԽ անդամների գործունեությունը մինչև հաջորդ հաշվետու տարին և ընտրել երկու նոր անդամ՝ Նարինե Բազինյանին և Կարեն Միխիթարյանին: Միաձայն որոշվեց նաև երկարացնել Լուիզեթ Լամարշի, Հայկ Ղամբարյանի և Գարիկ Գալստյանի պարտականությունները՝ համապատասխանաբար որպես միության նախագահ, փոխնախագահ ու գանձապահ, և Կարեն Միխիթարյանին նշանակել միության քարտուղար:

À la fin, les membres de l'association ont échangé sur les projets à monter pour 2011.

. On n'organisera plus de messe de Noël à Lille faute de disponibilité des organisateurs et de conditions climatiques difficiles. Chacun d'entre nous peut désormais se rendre à l'église arménienne de Bruxelles. Avec une concertation préalable, il est envisageable l'année prochaine de participer à la messe de Pâques et en l'honneur des victimes du génocide dont les dates coïncident cette année.

. Fêter la Fête des femmes 2011 avec les mêmes associations que l'année dernière. Proposition d'organiser une visite du musée de la Dentelle de Calais à cette occasion.

. Poursuivre et renforcer les cours d'arménien.

. Poursuivre les cours de français.

. Se déplacer en mars à Bruxelles pour voir l'exposition sur les cartes postales d'avant le génocide.

. Organiser une conférence sur l'Arménie avec l'Association historique de la ville de Mons en Barœul qui nous a sollicités à l'occasion du Forum des associations. Karen a déjà à sa disposition des supports papiers, il faudra juste les rédiger et voir la possibilité de la mise à disposition d'une exposition de photographie en provenance de la Maison d'Arménie à Paris.

. Garik a proposé de réfléchir à la récolte des photos faites par les efforts des membres de notre association en ce qui concerne la nature de l'Arménie, les coutumes et les mœurs des Arméniens. Cela nous permettrait d'organiser, à Lille et dans les communes voisines, des expositions photos ambulantes qui pourraient être accompagnées de conférences sur l'Arménie. L'argent placé sur le compte livret pourrait servir à la réalisation de ce projet.

. En mai/juin organiser une sortie sportive (char à voile, volley) à Calais ou dans une autre ville côtière « pimentée » par un barbecue.

. Organiser une visite guidée de Lille afin d'apprendre des choses sur une ville fréquentée par tous mais peu connue réellement.

. Peut être participer à une des manifestations de la prochaine fête d'été de la ville de Mons en Barœul.

Louisette Lamarche

SORTIES À L'OCCASION DE LA FÊTE DES FEMME

Pas de collaboration avec d'autres associations de Mons en Baroeul cette année, nous avons donc décidé de regarder ce qui était proposé aux femmes de la métropole.

Le 8 mars, au soir, nous avons pu à quelques-unes assister à une démonstration de harpe donnée par Mlle Carpentier à la Mairie de Tourcoing, puis voir la pièce de théâtre intitulée *Elles-mêmes* par la troupe du *Coffre d'Arlequin*. Deux femmes,

Photo de souvenir dans la cour du musée de l'Hospice comptesse
Հուշ-լուսանկար «Կոմսուհու հոսպիսը» թանգարանի բակում

Ընդհանուր հաշվետու ժողովը միաձայն որոշեց նաև անփոփոխ թողնել միությանն անդամակցվելու գումարը (տարեկան 15 €՝ ընտանիքից) և պարբերականի գինը: Հայերենի դասընթացների համար վճարվող ամսական գումարը (5 €) կվերաբերվի ընտանիքի առաջին երեխային, իսկ մյուսները կհաճախեն անվճար:

Վերջում միության անդամները մտքեր փոխանակեցին 2011 թ. սպասվող ծրագրերի մասին:

. Լիլում Սուրբծննդյան պատարագ չի պատվիրվի՝ կազմակերպիչների ժամանակի սղության և ոչ դյուրին կլիմայական պայմանների պատճառով: Ցանկության դեպքում մեզանից յուրաքանչյուրը կարող է այսուհանդերձ գնալ Բրյուսելի հայկական եկեղեցի: Հնարավոր է միմյանց հետ համաձայնեցված մասնակցել եկող տարի այս քաղաքում Զատիկի և Եղեռնի զոհերի հիշատակին տրվող պատարագին. այդ օրերն այս անգամ համընկնում են:

. 2011 թ. նշել Կանանց տոնը՝ համագործակցելով նույն միությունների հետ, ինչ այս տարի: Այդ առիթով առաջարկվում է նաև կազմակերպել էքսկուրսիա Կալեի Ժանյակի թանգարան:

. Շարունակել և խորացնել հայերենի դասընթացները:

. Շարունակել ֆրանսերենի դասերը:

. Մարտ ամսին մեկնել Բրյուսել՝ այցելելու Եղեռնից առաջ լույս տեսած փոստային բացիկների ցուցահանդեսին:

. Կազմակերպել Հայաստանին նվիրված դասախոսություն Մոնս ան Բարոլի Պատմական միության հետ համատեղ, որը մեզ դիմել է այդ առաջարկությամբ Միությունների ֆորումի ժամանակ: Կարենն իր տրամադրության տակ արդեն ունի նախապես հավաքագրած նյութեր, մնում է միայն դրանք խմբագրել և բանակցել Փարիզի Հայոց տան հետ, որպեսզի մեզ տրամադրեն Հայաստանի մասին լուսանկարների պատրաստի ցուցահանդեսը:

. Գարիկն առաջարկեց խորհել մեր միության անդամների ուժերով Հայաստանի բնությանը, հայերի նիստ ու կացին նվիրված լուսանկարների հավաքագրման մասին, որը հնարավորություն կընձեռեր կազմակերպել շրջիկ ցուցահանդեսներ Լիլում և հարակից շրջաններում, որոնք կարող են ուղեկցվել Հայաստանի մասին դասախոսություններով: Խնայողական գրքույկի վրա ունեցած գումարը կարող է ծառայել այս ծրագրի իրագործմանը:

. Մայիսին կամ հունիսին Կալեում կամ այլ ծովափնյա քաղաքում կազմակերպել մարզական միջոցառում (առագաստով կառք, վոլեյբոլ)՝ «համեմված» խորովածով:

. Զբոսավարի ուղեկցությամբ էքսկուրսիա կազմակերպել Լիլում, որտեղ բոլորս ապրում ենք կամ էլ լինում հաճախ և որին իրականում այնքան էլ ծանոթ չենք:

. Հնարավորության դեպքում մասնակցել Մոնս ան Բարոլի գալիք ամռանը ավանդաբար կազմակերպվող միջոցառումներից մեկին:

Լուիզեթ Լամարշ

ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Այս տարի Մոնս ան Բարոլ քաղաքի մյուս միությունների հետ ոչ մի համագործակցություն չունեցանք: Այդ պատճառով էլ որոշեցինք հետաքրքրվել, թե Լիլում և հարակից տարածքներում ի՞նչ էին առաջարկում Կանանց տոնի առթիվ:

Մարտի 8-ի երեկոյան Թուրքուենի քաղաքապետարանի շենքում մի քանի հոգով ներկա եղանք օրիորդ Կարպանտյեի տավիղի համերգին, այնուհետև «Արլեկինի ճամպրուկը» թատերախմբի՝ «Կանայք՝ իրենցով» ներկայացմանը: Երկու կին՝ շատ տարբեր, բայց նաև նման իրենց միայնությամբ, պատմում են իրենց ուրախությունների և դժվարությունների մասին: Չնայած արտաքուստ երջանիկ լինելուն, կեղծիքին, երազանքներին և հակասություններին, նրանք հավատարիմ են մնում իրենց իսկ կանացի էությանը: Այս ներկայացման հովանավորն էր Թուրքուենի քաղաքապետարանը:

très différentes mais pourtant si semblables dans leurs solitudes, se racontent leurs joies et leurs peines. Malgré les apparences, les mensonges, les rêves, les contradictions, elles ne sont qu'elles-mêmes … simplement des femmes. Ce spectacle a été offert par la ville de Tourcoing.

Le week-end suivant nous sommes allés à 17 au musée de l'Hospice comtesse, une grande bâtisse du Vieux Lille, à côté de laquelle beaucoup passaient sans connaître la richesse de ce lieu. L'exposition *De femmes en femmes*, qui y était présentée, montrait l'évolution de la condition féminine, de l'antiquité à nos jours, et tout particulièrement dans le Nord de la France. Elle a été créée par les services des Archives du Département du Nord qui centralisent tous les documents concernant ce territoire, quelque soit leur âge, et en fonction de leur importance. C'est là, par exemple, qu'il faut se rendre pour faire des recherches généalogiques au-delà de la 3e ou 4e génération dans les registres d'état civil conservés et numérisés.

En parcourant l'exposition, nous avons découvert les différents visages des femmes de toutes les époques : de la matrone romaine de la ville de Bavay aux femmes-mères de toutes les époques, aux femmes en lutte, aux femmes sorcières, aux femmes de pouvoir comme la comtesse Jeanne de Flandres qui fit construire cet hospice que nous avons visité. Les combats ont été nombreux. On peut citer notamment le code Napoléon qui a institué en droit l'infériorité de la femme avec une incapacité juridique totale. Ce code a également supprimé le droit au divorce instauré sous la Révolution puis réintroduit en 1884. Le droit de vote et le libre accès à l'avortement étaient aussi à l'honneur. De nos jours, la parité n'est pas encore gagnée notamment en matière de salaire et de politique. De nombreuses femmes dans le monde vivent encore dans des conditions d'exploitation indignes. C'est pour cela que la Journée des femmes du 8 mars à été instaurée voila plus de cent ans et qu'il faut continuer à la fêter sous toutes les formes possibles.

Après la visite, nous avons partagé un sympathique café à proximité du musée
Այցելությունից հետո սրճեցինք թանգարանին կից մի գողտրիկ սրճարանում:

Les femmes arméniennes et deux vaillants accompagnants ont découvert ce lieu particulier, les combats féminins et la valeur de l'engagement des femmes. Les questions à la guide ont été nombreuses. Bref, nous avons bien apprécié cette sortie en l'honneur du 8 mars. Après la visite, nous avons partagé un sympathique café à proximité de la place Louise de Bettignies, encore une femme de résistance du Nord de la fin du 19e siècle.

Louisette Lamarche

ARARAT MON AMOUR, D'UNE SORTIE DE VACANCES À UNE COMMÉMORATION

Mardi, le 3 août 2010, rendez-vous vers 18 heures 30, place de l'Opéra à Erevan.

Cet été-là, nous étions plusieurs Arméniens de Lille à être partis en vacance en Arménie. À l'initiative d'Arev, nous nous sommes réunis devant l'entrée principale du Théâtre académique nationale de l'opéra et du ballet A. Spendiarian après avoir dégusté une glace dans la chaleur de l'été. Arev nous

Հաջորդ շաբաթվա հանգստյան օրերին 17 հոգով գնացինք «Կոմսուհու հոսպիս» (L'Hospice comtesse) թանգարանը՝ Հին Լիլի մեծ շինություններից մեկը, որի կողքով մեզանից շատերն անցնում են՝ չիմանալով այս վայրի հարուստ պատմության մասին: «Կնոջից՝ կին» ցուցահանդեսը ներկայացնում էր կանանց քաղաքացիական կարգավիճակի զարգացումը՝ հնուց մինչև մեր օրերը, հատկապես՝ Ֆրանսիայի հյուսիսում: Ցուցահանդեսը կազմակերպել էր Նորդի մարզի արխիվային ծառայությունը, որը համախմբում է այս տարածաշրջանի հետ կապ ունեցող բոլոր նյութերն՝ անկախ հնությունից, և ըստ իրենց կարևորության: Օրինակ՝ 3-րդ կամ 4-րդ սերնդից սկսած տոհմաբանական ուսումնասիրությունները պետք է կատարել այստեղ պահպանվող թվայնացված քաղաքացիական ակտերի գրանցման մատյաններում:

Ցուցահանդեսի սրահներում բացահայտեցինք տարբեր ժամանակների կանանց տարբեր կերպարներ՝ Բավե քաղաքի հռոմեական կնոջ կերպարից մինչև բոլոր ժամանակաշրջանների կին-մայր, պայքարող կին, կին-վհուկ, իշխող կին, ինչպես կոմսուհի Ժաննա դը Ֆլանդրը, ով կառուցել է մեր այցելած այս բարեսիրական հաստատությունը: Պայքարի ճակատները բազմաթիվ են: Կարելի է մեջբերել Նապոլեոնի կոդեքսը, որով օրենքով հաստատվում էր կանանց ենթակա կարգավիճակը՝ նրանց ամբողջովին իրավազրկելով: Այս կոդեքսը նաև չեղյալ էր հայտարարել ամուսնալուծվելու իրավունքը, որը մտցվել էր Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ և վերականգնվել 1884 թ.: Ընտրական ու հղիությունը ընդհատելու իրավունքներին նվիրված ցուցավահանակները զբաղեցնում էին իրենց ուրույն տեղը: Անգամ այսօր տղամարդկանց հետ անհավասարությունը դեռ չի հաղթահարվել, հատկապես՝ աշխատանքի դիմաց վճարման և քաղաքական ներկայացուցչության բնագավառներում: Աշխարհի շատ կանայք դեռ ապրում են շահագործման անարժանապատիվ պայմաններում: Ահա այդ պատճառով է, որ հարյուր տարուց ավելի մարտի 8-ը նշվում է որպես Կանանց օր, և բոլոր հնարավոր միջոցներով պետք է շարունակել այն տոնել:

Հայ կանայք և երկու համարձակ հայ տղամարդ իրենց համար հայտնաբերեցին այս յուրահատուկ վայրը, ծանոթացան կանանց պայքարի պատմությանը, ձևերին, միջոցներին և կանանց այս գործում ներգրավման կարևորությանը: Էքսկուրսավարին ուղղված հարցերը բազմաթիվ էին: Մի խոսքով, մենք բարձր գնահատեցինք մարտի 8-ի առթիվ կազմակերպված այս էքսկուրսիան: Այցելությունից հետո սրճեցինք մի գողտրիկ սրճարանում. այն գտնվում էր Նորդի մարզի 19-րդ դարի վերջի ևս մի պայքարող կնոջ՝ Լուիզ դը Բեթինյիի անունը կրող հրապարակի հարևանությամբ:

Լուիզեթ Լամարշ

«ԱՐԱՐԱ՛Տ, ԻՄ ՍԵՐ», ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ

Երեքշաբթի՝ 3-ը օգոստոսի 2010 թ., հանդիպման վայրը՝ Երևան, Օպերայի հրապարակ, ժամը՝ 18:30:

Մի քանի լիլահայերով այդ ամառային արձակուրդներն անցկացրեցինք Հայաստանում: Ամառվա շոգին պաղպաղակ համտեսելուց հետո տիկին Արևի նախաձեռնությամբ հավաքվեցինք Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր մուտքի մոտ: Նա մեզ պատմել էր «Արարա՛տ, իմ սեր» ներկայացման մասին, որի մեջ ներգրավված են նրա մարսելյան ընտանիքի մի քանի անդամներ: Այդ օրը դժվար էր գտնել ավելորդ տոմս. Ներկայացման բոլոր տոմսերը սպառված էին, բայց մեկ է, մենք պատրաստ էինք դռները ստիպողաբար բացել տալ: Հանդիսատեսների մեջ կային և՛ ֆրանսիացիներ, որոնք ուղեկցում էին պարային խումբը, և՛ երևանցիներ: Այդ ներկայացման հովանավորներն էին Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատունը և Սփյուռքի նախարարությունը, որն էլ բաժանել էր տոմսերի մի մասը:

avait parlé du spectacle *Ararat mon amour* dans lequel participaient plusieurs membres de sa famille marseillaise. Ce 3 août, les places étaient difficiles à obtenir, le spectacle était complet mais, qu'à cela ne tienne, nous étions prêts à forcer la porte. Le public était composé à la fois de Français, nombreux accompagnateurs de la troupe, et d'Erevantsis. La venue de ce spectacle était soutenue par l'ambassade de France et le ministère arménien de la Diaspora qui avait distribué une partie des places.

C'est l'ensemble *Araxe-Sassoun* (président Dikran Harounyan, directeur artistique Pascale Chamassian), composé de 40 danseurs et 25 musiciens amateurs, rivalisant avec les professionnels, qui s'est produit sur scène. Cette troupe, qui a fêté en 2010 son cinquantième anniversaire, appartient à la Jeunesse arménienne de France (JAF) de Marseille. En 1984, elle est devenue « ensemble officiel de la ville de Marseille » et assure un rôle d'ambassadeur de la culture arménienne en France comme à l'étranger.

96 bougies ont été allumées auprès de la superbe toile peinte par nos membres
96 մոմ վառվեցին մեր միության անդամների նկարած հիանալի կտավի մոտ

Avec ce deuxième spectacle de la troupe, l'histoire éternelle des Arméniens nous a été contée dans un mélange de tradition et de modernité. Deux frères, Aram, le Marseillais, et Manouk, l'Erevantsi, se retrouvent à l'aéroport Zvartnots après presqu'une vie de séparation depuis 1915. Aram vient avec toute une troupe de danseurs d'origine arménienne présenter son fils à son frère qui fera de même pour que le lien familial renaisse à jamais. Et l'histoire se mélange à la réalité, la troupe retrace leur histoire et vit la sienne en même temps. L'émotion est palpable pour ces Français venus montrer qu'ils n'ont rien oublié, qu'ils conservent la tradition et même au-delà la réinvente par une chorégraphie pleine de fougue et de grâce.

Après la diffusion du film / Կինոցուցադրման ավարտից հետո

Tout était retrouvailles en ce jour : l'histoire même du spectacle, notre rendez-vous entre Lillois et celui d'Arev et sa famille marseillaise à Erevan et, pour la troupe, avec le chorégraphe Vanouch Khanamirian présent dans la salle. À la fin du spectacle, les artistes marseillais ont rendu hommage à ce dernier qui

Ելույթ ունեցավ «Արաքս-Սասուն» համույթը (տնօրեն՝ Տիգրան Աղունյան, գեղարվեստական ղեկավար՝ Պասկալ Շամասյան)՝ բաղկացած սիրողական 40 պարողներից և 25 երաժիշտներից, որոնք կարող են մրցակցել պրոֆեսիոնալների հետ: Այս խումբը, որը 2010 թ. տոնել էր իր հիսունամյակը, պատկանում է Մարսելի Ֆրանսահայ երիտասարդական միությանը (ԺԱՖ): Այն 1984 թ. դարձել է «Մարսելի պաշտոնական համույթը» և ստանձնել ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ արտասահմանում հայ մշակույթի դեսպանի պարտականությունը:

Անսամբլի այս երկրորդ համերգը հայերի հավերժական պատմությունը ներկայացրեց ավանդականի և արդիականի համադրումով: 1915 թ. Եղեռնի պատճառով բաժանումից հետո երկու եղբայր՝ մարսելցի Արամը և երևանցի Մանուկը, հանդիպում են «Զվարթնոց» օդանավակայանում: Ընտանեկան կապերը մեկընդմիշտ վերականգնելու համար Արամը գալիս է ծագումով հայ պարողների մի խմբով՝ իր տղային ներկայացնելու եղբորը, ով ճիշտ նույն կերպ է վարվում իր որդու և եղբոր հանդեպ: Եվ պատմությունը միախառնվում է իրականությանը, համույթը վերհիշում է նրանց պատմությունը և միևնույն ժամանակ վերապրում իրենը: Ակնհայտ է հուզմունքն այս ֆրանսահայերի, ովքեր եկել են ցույց տալու, որ իրենք ոչ միայն ոչինչ չեն մոռացել ու պահպանել են իրենց ավանդույթները, այլ նաև խանդավառությամբ ու նազանքով հագեցած խորեոգրաֆիայի ընձեռնած հնարավորություններով կարող են ցուցադրել իրենց ձեռքբերումները:

Դա վերահանդիպումների հաճելի օր էր. ներկայացման բուն պատմությունը, լիլահայերը՝ միմյանց հետ, տիկին Արևն իր

մարսելցի բարեկամների հետ, իսկ համույթը՝ դահլիճում ներկա պարուսույց Վանուշ Խանամիրյանի հետ: Ներկայացման վերջում մարսելցի արտիստները մեծարեցին պարոն Խանամիրյանին, ով մի քանի տարի առաջ նրանց պարի դասեր էր տվել, և ում նրանք նվիրել էին իրենց առաջին «Հայաստանի լեգենդ Վանուշը» ներկայացումը: Վ. Խանամիրյանը ջերմորեն շնորհավորեց պարողներին ու երաժիշտներին: Կարող ենք համոզված պնդել, որ համերգի մասնակիցների ուրախությունը դեռ երկար է շարունակվել վարագույրի իջնելուց հետո:

Մի քանի օր հետո Մարսելի «Արաքս-Սասուն» պարային համույթը բեմ դուրս եկավ Գյումրիի պետական դրամատիկական թատրոնում և հավատացած եմ՝ նույնպիսի հաջողությամբ: Համույթի հայաստանյան ելույթները Մայր հայրենիքի, Արարատի նկատմամբ սիրո յուրօրինակ խոստովանություն էին: Եվ պատահական չէ, որ անսամբլը հայրենիքում պարգևատրվեց ՀՀ Սփյուռքի նախարարության «Կոմիտաս» շքանշանով, իսկ գեղարվեստական ղեկավարն արժանացավ նախարարության պատվոգրին: Համույթի պատանիներն ու աղջիկները

ծանոթացան նաև Հայաստանի գեղատեսիլ բնությանն ու տեսարժան վայրերին, միաժամանակ պարարվեստի նոր հմտություններ ձեռք բերեցին հայկական պարի լեգենդ Վանուշ Խանամիրյանի, Երևանի պարարվեստի ուսումնարանի մանկավարժների շնորհիվ:

leur avait donné des cours il y a quelques années et auquel ils avaient consacré leur premier spectacle intitulé *Vanouch, légende d'Arménie*. V. Khanamirian a longuement félicité les danseurs et musiciens. Gageons que la fête a encore été longue pour eux après la chute du rideau.

Quelques jours après, le groupe de danse *Arax-Sassoun* de Marseille s'est produit au théâtre dramatique d'État de Gumri avec, j'en suis sûre, le même succès. Les spectacles arméniens donnés par le groupe ont été une sorte de déclaration d'amour envers la Mère patrie et l'Ararat. Cela n'a pas été un hasard si dans sa patrie d'origine la troupe s'est vue décernée la médaille « Komitas » du Ministère de la Diaspora, et son directeur artistique a mérité le diplôme d'honneur du même ministère. Les jeunes garçons et filles de l'ensemble ont fait connaissance avec la nature pittoresque de l'Arménie et visité ses monuments. Ils ont également acquis de nouveaux savoir-faire dans l'art de la danse avec le légendaire Vanouche Khanamiryan et grâce aux autres maîtres de l'école de danse d'Erevan.

*****

Compte tenu de la qualité et de l'émotion qu'avait produite ce spectacle, nous avons décidé de le diffuser le 23 avril 2011, dans la salle de cinéma du Fort de Mons, pour une première soirée en commémoration du génocide arménien de 1915. Une trentaine de personnes motivées ont assisté à cette projection qui s'est terminée par un moment de recueillement. À défaut de khatchkar en pierre, nous avons utilisé comme autel la superbe toile peinte par des membres d'*Ararat* à la naissance de l'association il y a plusieurs années. 96 bougies ont été allumées pour la triste commémoration de cette tragédie historique. À l'issue de la manifestation, les personnes présentes ont partagé un pot arménien traditionnel.

Après la messe, une procession s'est rendue au katchkar de la place Michaux
Պատարագից հետո երթով շարժվեցինք դեպի Միշո հրապարակի խաչքարը

Le lendemain, 24 avril, nous nous sommes rendus à une vingtaine de personnes à la messe de Pâques en l'église arménienne Sainte Marie-Madeleine de Bruxelles. Hasard du calendrier, celle-ci tombait en même temps que la journée commémorative du génocide. Cela a donné à cette messe une fréquentation et une ferveur exceptionnelle. L'église était comble et beaucoup de personnes ont dû rester dehors. La chorale dirigée par Haroutioun Louleci a fait vibrer les cœurs. À l'issue de la messe, les présents ont traditionnellement allumé des cierges et reçu des œufs de Pâques et du pain bénits. Après la cérémonie à l'église, une grande procession s'est rendue au Katchkar implanté sur la place Michaux toute proche. Les rues, par ailleurs, ont été fermées à cette occasion. Une courte allocution a été prononcée par le représentant de la communauté arménienne de Belgique. Puis le prêtre a rendu hommage aux martyres du génocide tout comme

*****

Հաշվի առնելով այդ բարձրաճաշակ ներկայացման պարգևած անմոռանալի պահերը՝ որոշեցինք 2011 թ. ապրիլի 23-ին Ֆորտ դը Մոնսի կինոդահլիճում ցուցադրել համերգի տեսագրությունը: Այդ երեկույթով ցանկանում էինք մեկ օր առաջ հարգել 1915 թ. հայոց Եղեռնի զոհերի հիշատակը: Երեք տասնյակից ավելի նախանձախնդիր լիլահայ մասնակցեցին այդ ցուցադրմանը, որից հետո տեղի ունեցավ կարճատև հավաքույթ: Չունենալով մեր խաչքարը՝ որպես խորան օգտագործեցինք «Արարատ» միության անդամների ջանքերով տարիներ առաջ նկարած հիանալի կտավը: ի նշանավորումն այս տխուր պատմական ողբերգության վառվեցին 96 մոմ: Միջոցառման վերջում ներկաները մասնակցեցին ավանդական հայկական խորտիկների համտեսմանը:

Հաջորդ օրը՝ ապրիլի 24-ին, մեզանից շատերը գնացին մասնակցելու Բրյուսելի Սուրբ Մարիամ-Մաղդեն եկեղեցում մատուցած Զատիկի պատարագին, որն այս տարի համընկնում էր Եղեռնի զոհերի հիշատակի օրվա հետ: Այդ պատճառով պատարագը սովորականից ավելի բազմամարդ էր: Եկեղեցու լեփլեցուն լինելու պարճառով շատերը ստիպված էին մնալ դրսում: Հարություն Լուլեցու գլխավորած երգչախումբը հուզեց շատերի սրտերը: Պատարագից հետո ներկաները ավանդաբար վառեցին մոմեր և ստացան Զատիկի օրհնված ձվեր, հաց: Եկեղեցում տեղի ունեցած արարողությունից հետո ներկաները մեծ երթով

Le groupe d'Arméniens de Lille auprès du khatchkar érigé sur la place Michaux
Լիլահայերի մի խումբ Միշո հրապարակում տեղադրված խաչքարի մոտ

շարժվեցին դեպի մոտակա Միշո հրապարակում տեղադրված խաչքարը: Ի դեպ, այդ առիթով փողոցները փակվել էին: Բելգիայի հայ համայնքի ներկայացուցիչը հակիրճ ելույթ ունեցավ, որից հետո քահանան՝ իր խոսքով, և երգչախումբը՝ երգով, հարգանքի տուրք մատուցեցին Եղեռնի նահատակներին: Դրվեցին նաև բազմաթիվ ծաղկեփնջեր: Լիլահայերը մեծ հուզմունքով և անմոռանալի հիշողություններով վերադարձան տուն:

Լուիզեթ Լամարշ

Les Arméniens de Lille à la sortie de l'église dans l'attente du pain bénit
Լիլահայերը եկեղեցու ելքի մոտ սպասում են Զատիկի օրհնած հացին

la chorale en chanson. Des gerbes ont également été déposées. Les Arméniens lillois sont ensuite rentrés à Lille avec beaucoup d'émotions et de souvenirs inoubliables.

Louisette Lamarche

DES NOUVELLES DES COURS D'ARMÉNIEN : UNE FAIBLE FRÉQUENTATION ET UNE BELLE SORTIE DE FIN D'ANNÉE

Le début de l'année scolaire 2010/2011 fut très calme. Tamar Hanonik a accepté de prendre en charge des cours de découverte de l'alphabet pour les jeunes enfants à partir de cinq ans. Cinq à six enfants ont suivi ses cours au démarrage. Susanna Mughnetsyan, par contre, n'a pas pu être remplacée. Après un hiver très froid et neigeux, nous avons fait le constat d'une forte baisse de la fréquentation des cours donnés par Haïk Gambarian. Nous avons pensé arrêter complètement les cours.

De nombreuses activités sont réservées aux enfants dans ce jardin unique
Այս յուրօրինակ զբոսայգին բազմաթիվ զբաղմունքներ է մատուցում երեխաներին

Après un sondage auprès des parents, nous avons finalement décidé, avec l'accord de la Mairie de Mons en Barœul qui met les salles à notre disposition, de déplacer les cours du samedi au dimanche après-midi. Cela a permis aux enfants qui avaient d'autres activités le samedi (musique, sport…) de reprendre les cours d'arménien. Au printemps, la fréquentation s'est un peu améliorée et nous avons fini l'année avec une douzaine d'enfants répartis entre les cours de Tamar et de Haïk.

Pour fêter la fin de l'année scolaire, nous avons souhaité organiser une sortie au parc Mosaïc à Houplin-Ancoisne. Peu d'Arméniens connaissaient ce lieu et ce fut une belle découverte. 33 hectares sont aménagés en « jardin des cultures » le long de la

Les grands espaces du parc sont une invitation aux différents jeux
Զբոսայգու ընդարձակ տարածությունները հարմարավետ են խաղերի համար

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՑ. ՎԱՏ ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՀԱՃԵԼԻ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

2010/2011 ուսումնական տարվա սկիզբը բավական հանգիստ էր: Թամար Հանոնիկը համաձայնեց վարել այբուբենին ծանոթացման դասընթացները հինգ տարեկանից բարձր երեխաների համար: Սկզբնական շրջանում 5-6 երեխա էին հաճախում այդ դասերին: Ցավոք սրտի, Սուսաննա Մուղնեցյանին փոխարինող չգտնվեց: Շատ ցուրտ և ձյունառատ ձմռանից հետո մենք արձանագրեցինք Հայկ Ղամբարյանի դասերի հաճախելիության կտրուկ անկում և մտածում էինք անգամ ամբողջովին դադարեցնել այդ դասընթացները:

Ծնողների շրջանում հարցումներ կատարելուց և մեզ դասասենյակներ տրամադրող Մոնս ան Բարոլի քաղաքապետարանի համաձայնությունից հետո վերջնականապես որոշեցինք տեղափոխել մեկօրյա դասընթացները շաբաթ օրվանից կիրակի՝ ճաշից հետո: Սա հնարավորություն կտար երեխաներին, որոնք շաբաթ օրերին այցելում են այլ խմբակներ (երաժշտական, սպորտային և այլն), վերստին հետևել հայերենի դասընթացներին: Գարնանը հաճախելիությունը որոշ չափով բարելավվեց, և տարեվերջին Թամարի ու Հայկի դասարաններում ունեինք տասը-տասներկու երեխա:

Nous avons également pu pique-niquer confortablement dans ce jardin
Հարմարավետ պայմաններում հաջողվեց նաև զբոսախնջույք կազմակերպել

Ուսումնական տարվա ավարտը նշելու համար մենք որոշեցինք էքսկուրսիա կազմակերպել Ուպլին-Անկուանի «Մոզայիկ» զբոսայգում, որտեղ սակավաթիվ հայեր էին եղել: Դյոլ գետի երկայնքով 33 հեկտարի վրա փռվել է այս Մշակույթների այգին: Ընդարձակ զբոսայգու տասներկու այգիները արժևորում են բուսական հարստությունը, արվեստի գործեր, հազվադեպ հանդիպող ընտանի կենդանիներ, Նորդ-Պա դը Կալեում ապրող ազգային համայնքների մշակույթների և իրենց բնօրրան երկրների բնապատկերների դետալներ: Ինդուստրիալիզացված լինելով՝ Ֆրանսիայի այս մարզը դարերի ընթացքում դեպի իրեն է ձգել ներգաղթի տարբեր ալիքներ՝ հարևան ֆլամանդացիներին, լեհերին ու Մագրեբի վերաբնակներին, որոնք անհրաժեշտ աշխատուժով պետք է ապահովեին տեքստիլ ֆաբրիկաները, քարածուխի հանքերը և մետալուրգիական գործարանները, ինչպես նաև պատերազմների ու տնտեսական դժվարությունների հետևանքով՝ իսպանացիներին, պորտուգալացիներին, հույներին, վիետնամցիներին և այլն:

Այսպիսով, Հսկայի այգին մեզ հիշեցրեց ֆլամանդական մշակույթը՝ իր խաղերով ու խոշոր ճագարներով: Վիշապի այգում մենք ընկղմվեցինք Հարավ-Արևելյան Ասիայից եկած վերաբնակների աշխարհի մեջ՝ հասմիկներով, կոչնազանգերով և սև խոզերով: Աֆրիկյան այգու հյուղակի բակում կարող էինք

Deûle. Dans ce vaste parc, une douzaine de jardins mettent en valeur des richesses botaniques, des œuvres d’art, des animaux domestiques rares, des éléments de paysage et de culture des communautés présentes dans le Nord-Pas de Calais. Cette région de France, du fait de son industrialisation, a attiré depuis plusieurs siècles des vagues d’immigration successives : les Flamands tout proches, les Polonais et les Magrébins pour fournir la main d’œuvre nécessaire dans les fabriques de textile, les mines et les usines métallurgiques, les Espagnols, les Grecs, les Portugais et les Vietnamiens suite aux guerres et aux difficultés économiques…

Ainsi, dans le Jardin du géant nous avons retrouvé une évocation de la culture flamande avec ses jeux et ses grands lapins. Dans le Jardin du dragon, nous avons plongé dans l’univers des migrants du Sud-Est asiatique, avec le jasmin, le gong et les cochons noirs. À côté de la case du Jardin africain, nous aurions pu écouter des contes de là-bas. Dans le Jardin des figuiers, la maison berbère, le thym, la sauge, la lavande et les chèvres sont chers au souvenir des Tunisiens, Marocains et Algériens de la métropole… Un jardin issu de fouilles archéologiques sur le site évoque aussi le passé préhistorique du lieu. Bref, la richesse de ce lieu est inépuisable et forcément parlante pour notre communauté d’émigrés arméniens.

Les grands espaces et les bois du parc sont également pour les petits et les grands une invitation aux jeux de ballons, de cache-cache… Nous avons pu pique-niquer confortablement, puis certains d’entre nous ont fait une pose dans les hamacs. Une animation autour de jeux anciens a permis aux petits et aux grands de montrer leur adresse. Après cette belle journée très appréciée, chacun est parti en vacances pour un repos bien mérité.

Louisette Lamarche

Photo de souvenir après la belle sortie de fin d’année
Հուշ-լուսանկար՝ տարեվերջյան հաճելի էքսկուրսիայից հետո

Pour contact et pour toute remarque, vous pouvez nous joindre aux adresses suivantes :
Par mail : aadelille@gmail.com
Par courrier : 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Par téléphone : 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Responsables de publication en français :
Louisette Lamarche, Garik Galstyan
Responsable de publication en arménien : Garik Galstyan
Traductions : Garik Galstyan
Corrections : Margarit Khatchatryan (arménien)

ունկնդրել այդ տարածաշրջանի հեքիաթները: Թզենիների այգու բերբերական տունը, ուրցը, եղեսպակը, նարդոսն ու այծերը շատ հոգեհարազատ են Լիլի տարածաշրջանում հանգրվանած թունիսցիների, մարոկկացիների և ալժիրցիների համար: Մի այլ այգի էլ տնկվել է հնագիտական պեղումների վայրի շուրջը մեկ անգամ ևս հիշեցնելով տարածաշրջանի նախապատմական անցյալը: Մի խոսքով, այս վայրի հարստությունն անսպառ է և շատ բան է պատմում հատկապես մեր համայնքի անդամներին, որոնք ներգաղթել են Հայաստանից:

Զբոսայգու ընդարձակ տարածություններն ու ծառախիտ պուրակները հնարավորություն են ընձեռում փոքրերին և մեծերին գնդակ խաղալ, պահմտոցի և այլն: Հարմարավետ պայմաններում հաջողվեց նաև զբոսախնջույք կազմակերպել, որից հետո մեզանից շատերը հանգստացան ցանցաճոճերի մեջ: Հին խաղերի շուրջը կազմակերպած միջոցառումը փոքրերին ու մեծերին հնարավորություն տվեց ցուցաբերել իրենց հմտությունները: Բոլոր ներկաները շատ գոհ մնացին էքսկուրսիայից և մեզանից շատերը կարող էին արդեն մեկնել երկար սպասվող արձակուրդի:

Լուիզեթ Լամարշ

Այս համարին առնչվող բոլոր դիտողությունները կարող եք մեզ հայտնել հետևյալ հասցեներով՝
Էլեկտրոնային փոստ՝ aadelille@gmail.com
Փոստային հասցե՝ 12, Rue Blériot, 59 260, Hellemmes-Lille, France
Հեռախոսներ՝ 09.53.10.84.75, 09.51.36.49.21

Ֆրանսերեն հրատարակչության պատասխանատուներ՝
Լուիզեթ Լամարշ, Գարիկ Գալստյան
Հայերեն հրատարակչության պատասխանատու՝
Գարիկ Գալստյան
Թարգմանությունները՝ Գարիկ Գալստյանի
Սրբագրությունները՝ Մարգարիտ Խաչատրյանի (հայերեն)

Imprimé par nos soins.
À ne pas jeter sur la voie publique.

Տպագրված է մեր միջոցներով:
Չցցե՛լ հասարակական վայրերում:

ASSOCIATION ARARAT
12 Rue Blériot
59260, Hellemmes-Lille

BULLETIN D’ADHESION

Nom, Prénom ______________________________

Adresse ______________________________

____

Email ______________________________

Téléphones ______________________________

Adhère à l’association ARARAT pour l’année 2011/2012 et a payé une adhésion de 15 euros (par famille)

(Date et Signature)

ISN 2117-5772
ISN 2117-5772